ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1961 Общественные науки

Հ. Ս. Մարգարյան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանում մեքենաշինության զարգացումը մինչև այժմ հիմնականում ընթացել է առարկայական մասնագիտացման ուղղությամբ։ Յուրաքանչյուր նոր կառուցվող մեքենաշինական գործարան մասնագիտացվել է որոշակի մեքենայի կամ շինվածքի արտադրության գծով։ Ըստ որում, հիմնադրված ամեն մի գործարան նախատեսված է պատրաստի մեքենայի կամ նրա առանձին մասի ու որևէ սարքի արտադրության համար։ Մեքենաշինական գործարանների թողարկած մեքենաները ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվում են որպես ավարտուն, պատրաստի արտադրության միջոցներ։

Հայաստանի զարգացող մեքենաշինության բնորոշ կողմը այն է, որ նա գերազանցապես բաց է թողնում արտադրության միջոցներ, որոնք իրենց հերթին օգտագործվում են նորից արտադրության միջոցների արտադրության համար։ Էլեկտրատեխնիկական արդյունաբերության և հաստոցաշինության արտադրանքը, որոնց ուղղությամբ էլ Հայաստանում զարգացել է մեքենաշինությունը, կոչված են ապահովելու ժողովրդական տնտեսության հիմքերի հիմքը հանդիսացող ծանր արդյունաբերության առավել ահռ։

Մեքենաշինական գործարանների թողարկած արտադրանքը ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում օգտագործվում են որպես պատրաստի արտադրանք և ուրիշ ձեռնարկություններում հետագա մշակման չեն ենթարկվում։ Մեքենաշինական գործարանների մասնագիտացումը Ռեսպուբլիկայում չի ընթացել մեքենաների առանձին հանգույցների ու դետալների արտադրության ուղիով, այլ ընթացել է առարկայական մասնագիտացման ուղղությամբ։

Պատրաստի արտադրանքի արտադրության գծով մասնագիտացումը համարվում է առարկայական մասնագիտացում։ Սակայն պատրաստի արտադրանք հասկացողությունը հարաբերական հասկացողություն է։ Այն, ինչ որ մի գործարանում պատրաստի արտադրանք է համարվում, մեկ ուրիշ գործարանի համար կարող է լինել որևէ մեքենայի դետալ կամ հանգույց, կամ որևէ ագրեգատի կոմպլեկտավորող մաս։ Այսպես, օրինակ, էլեկտրաշարժիչներ արտադրող գործարանի համար էլեկտրաշարժիչը պատրաստի արտադրանք է, բայց հաստոցների, կոմպրեսորների և պոմպերի համար այն կարող է օգտագործվել որպես կոմպլեկտավորման առարկա։ Հաստոցներն իրենց հերթին ժողովրդական տնտեսության մեջ օգտագործելու համար պատրաստի արտադրանք կարող են համարվել այն դեպքում, երբ կոմպլեկտավորված են էլեկտրաշարժիչներով կամ կոմպրեսոր արտադրող գործարաններ առարկայական մասնագիտացված գործարան է, սակայն հայտնի է, որ կոմպրեսորները ժողովրդական տնտեսության մեջ օգտագործել նպատակահարմար չէ առանց էլեկտրաշար-

ժիչների։ Այդ պատճառով էլ պատրաստի արտադրանք հասկացողությունը առարկայական մասնագիտացումը բնորոշելու համար հարաբերական հասկացողություն է։ Երբ մեքենաշինության մեջ խոսվում է որոշակի ավարտուն արտադրանքի արտադրության մասին, պատրաստի մեքենան ի նկատի է առնվում հարաբերական իմաստով՝ ի տարբերություն դետալների, հանգույցների ու մասերի արտադրության։

Մեքենաշինության մեջ առարկայական մասնագիտացված գործարանները մեքենաներ են թողարկում ժողովրդական տնտեսության որոշակի ճյուղերում օգտագործելու համար։ Գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը սպասարկում է գյուղատնտեսությանը, տրանսպորտային մեքենաշինությունը՝ տրանսպորտը, շինարարական ինդուստրիայի մեքենաշինությունը՝ շինարարությանը, քիմիական մեքենաների արտադրությունը՝ քիմիական արդյունաբերությանը և այլն։

Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերն սպասարկելու տեսակետից Հայկական ՍՍՌ մեքենաշինական ձեռնարկությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Մեքենաշինության գյուղատնտեսությանը սպասարկելու համար մեքենաներ արտադրող գործարաններ։ Դրանք են՝ Երևանի Ձերժինսկու անվան և Հոկտեմբերյանի հաստոցաշինական, Երևանի ֆրեզերային հաստոցների, Լուսավանի ներտաշ հաստոցների, Կիրովականի պրեցիզիոն հաստոցների և Լենինականի դարբնա-մամլակային սարքավորումների գործարանները և այլն։

2. Ընդհանրապես ծանր արդյունաբերությանը և ժողովրդական տնտեսության մի շարք այլ ճյուղերն սպասարկող մեքենաշինական ձեռնարկություններ. Հայէլեկտրագործարան, Երևանի էլեկտրատեխնիկական, Լենինականի ու Գորիսի միկրոէլեկտրաշարժիչների, Երևանի կոմպրեսորների և հիդրոպոմպերի գործարանները և այլն։

3. Սարքեր ու ավտոմատացման միջոցներ, հաշվիչ և հաշվիչ-մաթեմատիկական մեքենաներ արտադրող ձեռնարկություններ՝ էլեկտրաճշգրիտ չափիչ սարքերի, Երևանի և Լենինականի սարքաշինական, Սևանի կատարողական մեխանիզմների, Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանները և կառուցվելիք հաշվիչ-մաթեմատիկական մեքենաների գործարանը։ Մեքենաշինական գործարանների այս խմբի արտադրանքը կօգտագործվի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում և կնպաստի ժողովրդական տնտեսության մեջ տեխնիկական առաջադիմության բուռն վերելքին։

4. Մեքենաշինության մեջ օգտագործվող ագրեգատներ, դետալներ ու հանգույցներ արտադրող ձեռնարկություններ, կամ մեքենաշինության արտադրությանը սպասարկող հարակից ձեռնարկություններ. այդպիսի ձեռնարկություններից են՝ հիդրոհաղորդակ, հաստոցանորմալ, պլաստմասսա, էլեկտրաապարատների, էլեկտրակերամիկայի և կիսահաղորդիչների գործարանները, Երևանի գործիքաշինական և մեխանիկական, Լուսավանում կառուցվող գործիքաշինական գործարանները և այլն։

5. Սննդի արդյունաբերությանը սպասարկող մեքենաշինական ձեռնարկությունները՝ Կիրովականի մեքենաշինական գործարանը, Արտաշատի մեխանիկական գործարանը և այլն։

6. Ժողովրդի կուլտուր-կենցաղային պահանջները սպասարկող, կամ լայն սպառման առարկաներ արտադրող մեքենաշինական գործարաններ՝ Երևանի

ժամացույցի, Լենինականի հեծանիվի, էլեկտրալուսավորման և տեղակայման արմատուրայի ցինկապատ ամանեղենի գործարանները և այլն։

7. Տրանսպորտն սպասարկող մեքենաշինական ձեռնարկություններից է Երևանի ավտոպահեստամասերի գործարանը։

8. Շինարարության համար մեքենաներ կթողարկեն Լենինականի «Ստրոմմաշինա» և Երևանի վերամբարձ տրանսպորտային սարքավորումների գործարանները։

Մեքենաշինության արտադրանքի ստորաբաժանումը՝ համաձայն ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի սպասարկման, առարկայական մասնագիտացման արտացոլման ձև է։ Նշված խմբերի ձեռնարկությունները, բացի չորրորդ և յոթերորդ խմբերի ձեռնարկություններից, առարկայական մասնագիտացված ձեռնարկություններ են։ Մեքենաշինության արտադրանքի այդպիսի դասակարգումը ընդհանրապես հնարավորություն կտա ճիշտ սահմանելու ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի և մեքենաշինության համապատասխան ճյուղի զարգացման կապը։

ՀՍՍՌ-ում մեքենաշինական գործարանների առարկայական մասնագիտացմանը զուգընթաց, համեմատաբար նպաստավոր է բաշխվել պատրաստի արտադրանքի անվանացանկը։ Մեքենաշինական գործարանները երբեք ծանրաբեռնված չեն եղել մեքենաների բազմազան տեսակների կամ միևնույն մեքենայի բոլոր տեսակների արտադրությամբ։ Մեքենաշինական ձեռնարկությունների անվանացանկը հիմնականում սահմանափակվել է մեկ կամ մի քանի տեսակի արտադրանքով։ Միայն առանձին դեպքերում, ինչպես, օրինակ, Հայէլեկտրագործարանում, այն համեմատաբար մեծ է եղել։ Մեքենաշինական գործարանների արտադրանքի գլխավոր տեսակները նրանց համախառն արտադրանքի մեջ բացարձակ գերակշռող մասն են կազմում։ ՀՍՍՌ մեքենաշինության տասը գործարանների համախառն արտադրանքի մեջ արտադրանքի հիմնական տեսակների տեսակարար կշռի վերաբերյալ մեր կողմից կատարված հաշվումները ցույց են տալիս, որ հիմնական արտադրանքը կազմում է ձեռնարկությունների համախառն արտադրանքի մոտավորապես 90 տոկոսը։ Այսպես, օրինակ, Երևանի ավտոպահեստամասերի գործարանում հիմնական արտադրանքը կազմում է համախառն արտադրանքի 96,2 տոկոսը, Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում՝ 89,5 տոկոսը, Լենինականի հեծանիվի գործարանում՝ 97 տոկոսը, հիդրոպոմպերի գործարանում՝ 91,2 տոկոսը, կոմպրեսորների գործարանում՝ 88,1 տոկոսը, Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանում՝ 92 տոկոսը և այլն։ Մոտավորապես նույնպիսի պատկեր է մյուս մեքենաշինական գործարաններում։ Երևանի էլեկտրատեխնիկական գործարանը մասնագիտացվել է երրորդ և չորրորդ գաբարիտի էլեկտրաշարժիչների, իսկ էլեկտրաշարժիչների գործարանը՝ առաջին և երկրորդ գաբարիտի էլեկտրաշարժիչների արտադրության գծով, Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը, խառատային պտուտակահան հաստոցների, էլեկտրաճշգրիտ չափիչ գործարանը՝ չորս անուն սարքերի, Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանը՝ ուղղահայաց գայլիկոնող հաստոցների, Կիրովականի մեքենաշինական գործարանը՝ սննդարդյունաբերության սարքավորումների, Հայէլեկտրագործարանը՝ էլեկտրամեքենաների արտադրության գծով և այլն։ Ինչպես նշված, այնպես էլ մնացած մեքենաշինական գործարանները արտադրում են իրենց հիմնական արտադրանքի մի քանի տեսակները։ Հայ-

կական ՍՍՌ մեքենաշինական գործարաններից և ոչ մեկում հիմնական արտադրանքի տեսակարար կշիռը ապամասնագիտացման պատճառով չի փոխել, ինչպիսի երևույթ մենք տեսնում ենք Միության մի շարք խոշոր ձեռնարկություններում։

Պրոֆիլին չհամապատասխանող արտադրանքի ավելացման հետևանքով Գորկու ավտոմոբիլային գործարանում հիմնական արտադրանքի տեսակարար կշիռը, սկսած 1947 թվականից, խիստ ընկել էր։ Եթե ավտոմեքենաների արտադրանքի տեսակարար կշիռը 1950 թվականին 76 տոկոս էր, 1954 թվականին 67, ապա 1955 թվականին այն կազմեց 45,5 տոկոս։ 16 տիպի ավտոմեքենաներից բացի այնտեղ արտադրվում էր նաև 70 զանազան տիպի արտադրանք՝ հաստոցներ, էլեկտրական ապարատներ, գործիքներ, ամրակապման նյութեր և այլն։ Լենինգրադի «Ռեդուկտոր» գործարանի արտադրանքի մեջ ռեդուկտորները 1956 թվականին կազմում էին ամբողջ համախառն արտադրանքի 10 տոկոսից մի քիչ ավելին։ 1954 թվականին Լենինգրադի պոլիգրաֆ գործարանում պոլիգրաֆ մեքենաների տեսակարար կշիռը ամբողջ արտադրանքի մեջ կազմեց միայն 21 տոկոս, իսկ մնացածը՝ ժամացույցի արդյունաբերության համար սարքեր, պարֆյումերիայի ֆաբրիկաների սարքավորումներ, բժշկական գործիքներ էին[1]։

ՀՍՍՌ Ժողտնտխորհի ստեղծումից հետո առարկայական մասնագիտացման բարելավման ուղղությամբ կենսագործված միջոցառումների շնորհիվ լ ավելի է ճշտվել մեքենաշինական գործարանների պրոֆիլը և նրանց արտադրանքի անվանացանկը։ Այդ բարելավումը տեղի է ունեցել մի կողմից մեքենաշինության արտադրանքը գործարանների միջև նպատակահարմար բաշխելու հետևանքով և մյուս կողմից միևնույն արտադրանքը զուգահեռաբար մի քանի գործարաններում արտադրելու պրակտիկան վերացնելու միջոցով։

Առարկայական մասնագիտացման կարևոր ցուցանիշներից է արտադրանքի առանձին տեսակների արտադրության կենտրոնացումը մեքենաշինության համապատասխան ճյուղերում։ Այսպես, հաստոցների արտադրության կենտրոնացումը հաստոցաշինական գործարաններում, էլեկտրատեխնիկական մեքենաների արտադրության կենտրոնացումը էլեկտրամեքենաշինության ձեռնարկություններում և այլն։ ՀՍՍՌ մեքենաշինության արտադրանքի առանձին տեսակները, առանց բացառության, արտադրվել են համապատասխան ճյուղերի ձեռնարկություններում։ Միության մասշտաբով այս առումով եղել են լուրջ թերություններ։

ՍՄԿՊ Կենտկոմի 1955 թվականի Հուլիսյան պլենումը բացահայտեց մասնագիտացման գործում եղած թերությունները։ Բանն այն էր, որ սարքերի արտադրությամբ զբաղված էին 30-ից ավելի արդյունաբերական մինիստրություններ։ Ոչ մեքենաշինական ձեռնարկություններում ու գերատեսչություններում միավորված էին 3 հազար մեքենաշինական ու վերանորոգման-մեխանիկական գործարաններ։ Չնայած այդ գործարաններում կենտրոնացված էր մեքենաշինության մետաղահատ հաստոցների ամբողջ պարկի 50 տոկոսը և դարբնա-մամլակային սարքավորումների մոտ 60 տոկոսը, նրանք տալիս էին մեքենաշինության արտադրանքի 30 տոկոսից էլ պակաս մասը։ Գյուղատնտե-

[1] В. Ганштак, П. Жуков „Специализация и кооперирование в промышленности". Госполитиздат, 1957, стр. 16.

սության մինիստրությունը թողարկում էր երկրում արտադրվող հաստոցների տասը տոկոսը և դարբնա-մամլակային սարքավորումների 24 տոկոսը։ Էքսկավատորներ արտադրվում էին 6 մինիստրությունների ձեռնարկություններում։ Գյուղատնտեսության մեքենաշինության մեջ և մետաղահատ հաստոցների արտադրության ճյուղում հիմնական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 50—60 տոկոս։ Նշանակում է այդ ճյուղերը համարյա կիսով չափ ծանրաբեռնված էին իրենց արտադրության մասնագիտության հետ կապ չունեցող մեքենաների արտադրությամբ։ Հաստոցաշինական գործարաններում արտադրվում էր էլեկտրական մեքենաներ ու սարքավորումներ, գյուղատնտեսության մեքենաների պահեստամասեր և այլն։

Հայկական ՍՍՌ Մեքենաշինությունը զերծ է եղել նման թերություններից։ Ինչպես երևում է, արտադրվող մեքենաների որոշակի տեսակները՝ հաստոցներ, էլեկտրամեքենաներ և այլն, արտադրվել են համապատասխան ճյուղի ձեռնարկություններում։

Առարկայական մասնագիտացման զարգացումը ենթադրում է տվյալ գործարանում պատրաստի մեքենաների արտադրության տեսակների կրճատում։ Արտադրանքի անվանացանկի կրճատումը արտադրության մասնագիտացման բարձրացման ցուցանիշ է։ Այնտեղ, որտեղ արտադրանքի անվանացանկը փոքր է, մնացած բոլոր հավասար պայմաններում, մասնագիտացման մակարդակը բարձր է։ Եթե տվյալ գործարանում արտադրվում է մեկ կամ երկու տեսակի արտադրանք, ապա այդ դեպքում արտադրանքի այդ տեսակների արտադրությունը կատարելագործելու մեծ հնարավորություններ է ստեղծվում։ Նույնատիպ արտադրանքի տեխնոլոգիական պրոցեսները նման են, միանման է իրականացվում նրանց մասերի ու հանգույցների արտադրությունը։ Արտադրանքի փոքր անվանացանկի պայմաններում մեծ հնարավորություններ են ստեղծվում նոր տեխնիկայի, բարձր արտադրողական սարքավորումների ներդրման և ռացիոնալ օգտագործման համար։ Աշխատանքի միևնույն պրոցեսները կատարող մասնագետները մեծ հմտություն ու որակ են ձեռք բերում կատարելագործված տեխնիկան օգտագործելու ուղղությամբ։

Արտադրության մասնագիտացման գլխավոր բովանդակությունը միատեսակ արտադրանքի արտադրության կենտրոնացումն է, որի պայմաններում հնարավոր է լինում իրականացնել աշխատանքի տվյալ առարկայի վրա միանման միջոցներով ներգործելը, աշխատանքի միանման առարկան միանման միջոցներով վերափոխելու հնարավորությունը։ Արտադրության միասեռությունը մեքենաշինական ձեռնարկություններում կարող է իրականացվել, եթե արտադրանքի անվանացանկից հանվեն տվյալ ձեռնարկության պրոֆիլին չհամապատասխանող արտադրանքի տեսակները, կենտրոնացվեն միանման տեխնոլոգիա ունեցող արտադրանքի տեսակները և կազմակերպվի ձեռնարկության սարքավորումների բնույթին, կադրերի որակին և մասսայական ու խոշոր սերիական արտադրության պահանջներին համապատասխան արտադրությունը։ Միաժամանակ պետք է առանձնացվի ոժանդակ արտադրությունը և մասնագիտացման ենթարկվեն ցեխերն ու տեղամասերը։ Արտադրանքի անվանացանկի կրճատումը, որը միատեսակ արտադրանքի արտադրության ստեղծման կարևոր պայմանն է, ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի կիրառման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ ՀՍՍՌ մեքենաշինության ձեռնարկու-

թյունների թվի և նրանցում արտադրվող արտադրանքի հիմնական տեսակների վերաբերյալ մեր կողմից կատարված հաշվումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր ձեռնարկությունում արտադրվում է հիմնական արտադրանքի մոտավորապես 2—3 տեսակ։ Հիմնական արտադրանքի առանձին տեսակներ առանձին դեպքերում տատնյակ տիպաչափեր ունեն, սակայն նրանք մասնագիտացվել են հիմնականում արտադրանքի 2—3 տեսակների գծով։ Իհարկե, գործարանների մի մասում արտադրանքի հիմնական տեսակները ավելի են, իսկ որոշ գործարաններում՝ պակաս։ Օրինակ, Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանը արտադրում է մեկ տիպի հաստոց, Ձերժինսկու անվան գործարանը երկու տիպի խառատային հաստոցներ, իսկ Հայէլեկտրո գործարանում արտադրվում է էլեկտրական մեքենաների ութ հիմնական տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի 10 և ավելի տիպաչափեր։

Այսպիսով, արտադրանքի անվանացանկի տեսակետից ՀՍՍՌ մեքենաշինական ձեռնարկություններում առարկայական մասնագիտացման գոյություն ունեցող վիճակը կարելի է բավարար համարել։ Սակայն արտադրության մասնագիտացման մակարդակը չի կարող որոշվել միայն արտադրանքի անվանացանկի թվով։ Արտադրության մասնագիտացման աստիճանը և նրա տնտեսական արդյունավետությունը բարձր կարող է լինել նաև այն դեպքում, երբ համեմատաբար մեծ է թողարկվող արտադրանքի անվանացանկը, բայց այն հիմնված է մասսայական, մեծ չափերով կենտրոնացված արտադրության վրա։ Այլ կերպ ասած, արտադրության մասնագիտացման տնտեսական արդյունավետությունը դրսևորվում է մասսայական արտադրության ժամանակ, երբ հնարավոր է ավելի արդյունավետ օգտագործել բարձր արտադրողական սարքավորումները։ Բացառված չէ այն հանգամանքը, որ հինգ տեսակի արտադրանք տվող ձեռնարկության մեջ մասնագիտացման մակարդակը ավելի բարձր լինի, քան, ասենք, երեք տեսակի արտադրանք բաց թողնող գործարանում։ Այդ այն դեպքում, երբ առաջինում մասնագիտացման մակարդակը ավելի բարձր է, քան երկրորդում, այսինքն, երբ արտադրության տեխնոլոգիական պրոցեսները նման են իրար, միատեսակ են սարքավորումները, գործիքները ու հարմարանքները։ Այդ նշանակում է, որ արտադրանքի արտադրությունը տվյալ գործարանում ավելի խոշոր չափերով է իրականացվում։

Արտադրության մասնագիտացման գործում արտադրանքի անվանացանկի մեծության նշանակությունը պարզելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նաև արտադրանքի հիմնական տեսակների բազմաթիվ տարատեսակների արտադրությունը։ Արտադրության տեխնիկայի զարգացման անընդհատ պրոցեսը արտադրանքի բազմաթիվ տարատեսակների ավելի արագ աճ է ենթադրում, քան համապատասխան գործարանների ու ցեխերի աճը։ Սոցիալիստական հասարակության մեջ ժողովրդի նյութական ու կուլտուրական պահանջների բավարարման համար տարբեր սպառողական ապրանքների և, որ գլխավորն է, արտադրվող արտադրության նոր միջոցների թիվն ավելի արագ է աճում, քան համապատասխան գործարանները ու ցեխերը։ Հետևապես, երբեք հնարավոր չէ, որ գործարաններից ու ցեխերից յուրաքանչյուրն զբաղված լինի միայն մեկ կամ երկու տեսակի արտադրանքի արտադրությամբ։ Միատեսակ արտադրանքի բազմաթիվ տարատեսակների արտադրությունը կենտրոնացվում է մասնագիտացված գործարաններում ու ցեխերում։ Հետևապես գործարաններում արտադրվող արտադրանքի անվանացանկն անընդհատ ավելանում է։ Հատկապես մե-

ծանում է միևնույն արտադրանքի տարբեր տիպաչափերի անվանացանկը։ Զարգացման այնպիսի պայմաններում, երբ անընդհատ փոխվում են մեքենաների կոնստրուկցիաները և նոր մեքենաներ են ստեղծվում, արտադրության մասնագիտացման աստիճանը կարող է բարձրանալ միատեսակ արտադրանքի տարբեր տիպաչափերի կենտրոնացման միջոցով։ Օրինակ՝ Երևանի հիդրոպոմպերի գործարանում արտադրվում է «Կ» տիպի պոմպերի մոտ երկու տասնյակ տիպաչափեր։ Էլեկտրատեխնիկական գործարանում երրորդ գաբարիտի էլեկտրաշարժիչների մոտ 50 և չորրորդ գաբարիտի էլեկտրաշարժիչների ավելի քան 120 տիպաչափեր։ Հայէլեկտրագործարանում 1960 թվականին արտադրվել է առաջին գաբարիտի յուղային տրանսֆորմատորների 8 տեսակներ, երկրորդ գաբարիտի տրանսֆորմատորների՝ 10 տեսակներ, մինչև 100 կվտ. հզորության գեներատորների՝ 9 տեսակներ, ղեկավարման վահանների 6 տեսակներ և այլն։ Կիրովականի պրեցիզիոն հաստոցների գործարանը մասնագիտացվել է սեղանի տիպի խառատային գայլիկոնող ճշգրիտ հաստոցների արտադրության գծով, որտեղ արտադրվելու են Դ—261, Ա—155, Ռ—130 տիպի 28 տեսակի առաջին և երկրորդ կարգի ճշտության հաստոցներ։ Հաստոցների տեսակների այդպիսի քանակությունը չի խանգարում, որ այդ գործարանը բավականին բարձր մասնագիտացման աստիճան ունենա, որովհետև այդ հաստոցների արտադրության տեխնոլոգիան նման է և սարքավորումները էլ նույնն են։ Այսինքն, հաստոցների այդ տեսակների արտադրությունը միանման է և միատեսակ արտադրության արտադրանքի կենտրոնացման հետևանքով այնտեղ մասնագիտացման աստիճանը բարձր է։

Այսպիսով, արտադրանքի անվանացանկի կրճատումն ինքնին մասնագիտացման աստիճանի բարձրացման ցուցանիշ կարող է լինել այն ժամանակ միայն, երբ տեղի է ունենում միատեսակ արտադրանքի կենտրոնացում մի որևէ գործարանում կամ ցեխում։

Չնայած այն բանին, որ ՀՍՍՌ մեքենաշինական գործարաններում արտադրանքի անվանացանկի մեջ խիստ բազմազանություն չկա, այնուամենայնիվ գործարանների միջև արտադրանքի տեսակների բաշխման գործում մինչև Ժողտնտխորհի ստեղծումը լուրջ թերություններ կային։ Արտադրությունը գերատեսչական ձևով ղեկավարելու ժամանակ ՀՍՍՌ մեքենաշինական գործարանները ենթարկվում էին բազմաթիվ մինիստրությունների և գերատեսչությունների, որի հետևանքով միևնույն արտադրանքի արտադրությամբ զուգահեռաբար զբաղվում էին մի քանի գործարաններ, կամ որևէ գործարանի արտադրանքի անվանացանկի մեջ սխալմամբ մտցվում էր նրա պրոֆիլին չհամապատասխանող մեքենաների արտադրություն։ ՀՍՍՌ Ժողտնտխորհի ստեղծումից հետո միջոցառումներ ձեռնարկվեցին արտադրանքի առանձին տեսակների արտադրությունը մեքենաշինական ձեռնարկությունների միջև ճիշտ կերպով բաշխելու և առարկայական մասնագիտացումը բարելավելու ուղղությամբ։

Երևանի Փոքր հիդրոտուրբինների գործարանում արտադրվում էին հիդրոտուրբիններ և հիդրոպոմպեր։ Ինչպես հիդրոտուրբինների, այնպես էլ թողարկվող պոմպերի որակը խիստ ցածր էր, որի պատճառով բազմաթիվ բողոքներ էին ստացվում սպառողներից։ Արտադրանքի ինքնարժեքը խիստ բարձր էր և գործարանը աշխատում էր մնասով։ Գործարանի անբավարար աշխատանքը քննադատության ենթարկվեց Հայաստանի Կոմպարտիայի XVIII համագումարում։ Գործարանը մասնագիտացնելու նպատակով 1958 թվականի սկզբից ար-

տադրանքի անվանացանկից հանվեց հիդրոտուրբինների արտադրությունը և այն մասնագիտացվեց հիդրոպոմպերի արտադրության գծով։ Արտադրության մասնագիտացման շնորհիվ հիդրոպոմպերի գործարանը դարձավ ռեսպուբլիկայի մեքենաշինության առաջավոր ձեռնարկություններից մեկը։

Երևանի էլեկտրանորոգման գործարանը մասնագիտացվեց առաջին և երկրորդ գաբարիտի էլեկտրաշարժիչների արտադրության գծով և կոչվեց էլեկտրաշարժիչների գործարան։ Գործարանի արտադրանքի անվանացանկից հանվեց զոդման տրանսֆորմատորների արտադրությունը և այն մտցվեց Լենինականի էլեկտրատեխնիկական իրերի արտադրության գործարանի բազայի վրա կազմակերպված էլեկտրատեխնիկական գործարանի արտադրանքի անվանացանկի մեջ։ Վելոչինիս արտադրանքի անվանացանկից հանվեց էլեկտրատեղակայման շինվածքների արտադրությունը և տրվեց էլեկտրալուսավորման ու տեղակայման արմատուրայի գործարանին։ Լենինականի Մեխանիկական գործարանում կենտրոնացվել էին արտադրանքի բազմաթիվ տեսակներ, որոնք արտադրության տեխնոլոգիայի միատեսակության տեսակետից միանգամայն անհամատեղելի էին միևնույն գործարանում արտադրելու համար։ Այնտեղ թողարկվում էին քար հղկող ու տաշող հաստոցներ, մամլիչներ, շարժական սղոցարաններ, մահճակալներ, նավթավառներ և բազմաթիվ այլ իրեր։ Ասորտիմենտի բազմազանության հետևանքով արտադրության տեխնիկան ու արտադրանքի որակը խիստ ցածր էր։ Ժողտնտխորհի որոշմամբ գործարանի արտադրությունից հանվեց մահճակալների արտադրությունը և այն կենտրոնացվեց Շահումյանի անվան մահճակալների գործարանում։ Դադարեցվեց նաև արտադրանքի մյուս տեսակների արտադրությունը և մասնագիտացվեց քար մշակող հաստոցների և մամլիչ մեքենաների արտադրության գծով։ Արտադրության մասնագիտացման համար ձեռնարկված միջոցառումների հետևանքով մամլիչների արտադրանքի տեսակարար կշիռը գործարանի համախառն արտադրանքի մեջ 1959 թվականին կազմեց 76,5 տոկոս, մեկ ռուբլու ապրանքային արտադրանքի վրա կատարած ծախսերը, 1956 թվականի համեմատությամբ, կրճատվեցին 12,1 տոկոսով, մեկ բանվորին ընկնող համախառն արտադրանքի քանակն ավելացավ 14,5 հազար ռուբլով։ Առաջիկայում «Ստրոմմաշինա» գործարանի կառուցման ավարտումից հետո արտադրանքի անվանացանկից կհանվի նաև քար մշակող հաստոցների արտադրությունը և գործարանը կմասնագիտանա միայն մամլիչ մեքենաների արտադրության գծով։

Մինչև Ժողտնտխորհի ստեղծումը արտադրանքի մի շարք տեսակներ զուգահեռաբար արտադրվում էին տարբեր գործարաններում։ Երևանի մեխանիկական գործարանը մասնագիտացվեց արմատուրայի, ֆիտինգների ու կարգավորիչների արտադրության գծով։ Այդ գործարանում արտադրվող մետաղյա ամանների արտադրությունը հանձնվեց համապատասխան գործարանի։ Շարժական էլեկտրակայանների արտադրությունը հանվեց էլեկտրատեխնիկական գործարանից և ամբողջությամբ կենտրոնացվեց Հայէլեկտրագործարանում, իսկ 1961 թվականից արդեն այդ գործարանում լրիվ կերպով կդադարեցվի գեներատորների արտադրությունը և նույնպես կհանձնվի Հայէլեկտրագործարանին։

Արդյունաբերական ձեռնարկություններում արտադրանքի անվանացանկի

Լենինյան ուղիով, № 9, 1959, էջ 83։

ճշտման և առարկայական մասնագիտացման բարելավման ուղղությամբ ՀՍՍՌ ժողտնտխորհի կողմից ձեռնարկված առաջին միջոցառումները նպաստավոր պայմաններ ստեղծեցին արտադրության կատարելագործման, նոր տեխնիկայի արագ ներդրման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Ձեռնարկված միջոցառումների հետևանքով 31 արդյունաբերական ձեռնարկությունների բազայի վրա կազմակերպվեցին 14 խոշոր ձեռնարկություններ։ Այդ բանը հնարավորություն տվեց վարչակառավարչական ապարատը կրճատել 164 միավորով, որից միայն աշխատավարձի տնտեսման հաշվին տարեկան խնայողությունը կազմեց 2 միլիոն ռուբլի։ 1957 թվականի մի քանի ամիսների ընթացքում արտադրության մեջ ներդրվեցին և նպատակահարմար կերպով սկսեցին օգտագործվել 150 հաստոցներ ու սարքավորումներ, որոնք նախկինում բոլորովին չէին օգտագործվում, կամ օգտագործվում էին թերբեռնվածությամբ։ Լրացուցիչ կերպով օգտագործման հանձնվեց 28 հազ. քմ. արտադրական տարածություն, որտեղ հիմնականում կազմակերպվեցին մեքենաշինական ու սարքաշինական գործարաններ։ Վերակառուցվող ու նոր ստեղծվող գործարաններում ավելի որոշակի դարձան պատրաստի արտադրանքի արտադրության մասնագիտացման ուղղությունները։

ՀՍՍՌ մեքենաշինության մեջ առարկայական մասնագիտացման վիճակի հետագա բարելավման կարևոր նախադրյալը գործող ձեռնարկությունների անվանացանկը ճշտելուց բացի, նոր կառուցվող գործարանների մասնագիտացումն է՝ որոշակի մեքենայի կամ սարքի արտադրության համար։ Ինչպես հայտնի է, ՍՍՌՄ մեքենաշինության արտադրանքի յոթնամյա պլանով նախատեսված աճը գերազանցապես իրականացվելու է գործող ձեռնարկությունների վերակառուցման և նոր տեխնիկայի ներդրման հիման վրա նրանց կարողությունների լրիվ օգտագործման ճանապարհով։ Տվյալ ժամանակաշրջանում ՀՍՍՌ մեքենաշինության զարգացման առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա արտադրանքի աճի մի զգալի մասը տեղի է ունենալու նոր գործարկվող գործարանների հաշվին։ Ըստ որում, յուրաքանչյուր նոր կառուցվող գործարանում տեղի է ունենում նույն տիպի մեքենայի կամ սարքերի արտադրության կենտրոնացում, և խստորեն պահպանվում է առարկայական մասնագիտացման պահանջը։ Վերջին տարիներում նոր կառուցված մեքենաշինական գործարանները մասնագիտացվել են որևէ մեքենայի կամ սարքի արտադրության գծով։ Լենինականի հղկող հաստոցների, Լուսավանի ներտաշ հաստոցների, Երևանի ֆրեզերային հաստոցների, Կիրովականի պրեցիզիոն հաստոցների, Լենինականի ու Գորիսի միկրոէլեկտրաշարժիչների, Երևանի ու Լենինականի սարքաշինական, Կիրովականի «Ավտոմատիկա» և կառուցված ու կառուցվող բոլոր գործարանները մասնագիտացվում են արտադրանքի առանձին տեսակների արտադրության համար։

ՀՍՍՌ մեքենաշինության առարկայական մասնագիտացումը ընթանում է մեքենաշինության համապատասխան ճյուղերի զարգացման ուղղությամբ։ Եթե մինչև վերջերս մեքենաշինական գործարանները մասնագիտացվում էին հաստոցաշինության, ընդհանուր մեքենաշինության ու էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ուղղությամբ, ապա այժմ առարկայական մասնագիտացված ձեռնարկություններ են ստեղծվում նաև սարքաշինության ու ռադիոտեխնիկական արտադրության մեջ։ Մեքենաշինության հետագա զար-

գացման հետ միասին առարկայական մասնագիտացումը մեքենաշինության վերոհիշյալ ճյուղերում զարգանալու է ոչ միայն արտադրանքի տեսակների ու գործարանների թվի ավելացման հաշվին, այլև մեքենաշինության նոր ստեղծվող ճյուղի՝ ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացման հաշվին։

Ինչպես ՍՍՌՄ մեքենաշինության զարգացման նախորդ ամբողջ ժամանակաշրջանում, այնպես էլ Հայկական ՍՍՌ մեքենաշինության մեջ ևս զարգացել է առարկայական մասնագիտացումը։ ՍՍՌՄ մեքենաշինության մեջ առարկայական մասնագիտացման զարգացումը առարկայական մասնագիտացված կոմպլեքսային գործարանների հիման վրա, պայմանավորված էր մեքենաշինության զարգացման պատմական համապատասխան ընթացքով։ Ցարական Ռուսաստանից մեր երկիրը ժառանգեց ունիվերսալ գործարաններ, որոնց վերակառուցման ու մասնագիտացման համար որոշ ժամանակ էր հարկավոր։ Այնուհետև, մեքենաշինության զարգացման ընդհանուր մակարդակը դեռևս ցածր էր և որոշ իմաստով հնարավոր չէր հրաժարվել կոմպլեքսային գործարանների կառուցումից։ Կոմպլեքսային գործարանների (գործարաններ, որոնցում իրականացվում է պատրաստի մեքենայի արտադրության համար անհրաժեշտ բոլոր տեխնոլոգիական ու արտադրական պրոցեսները) կառուցումը անխուսափելի էր հատկապես երկրի այն տնտեսական շրջաններում, որտեղ մեքենաշինության արտադրություն չկար, կամ այն չափազանց թույլ էր զարգացած։

Հայաստանում մեքենաշինությանը, որպես արտադրության ճյուղ, հիմք դրվեց Հայրենական պատերազմի ժամանակ և արագ զարգացում ապրեց հատկապես հետպատերազմյան շրջանում։ Մեքենաշինական գործարանի կոմպլեքսի և մեքենաշինությանը սպասարկող գործարանների բացակայության պայմաններում մեքենաշինական ձեռնարկությունները մասնագիտացվում էին որևէ պատրաստի մեքենայի արտադրության, կամ միայն առարկայական մասնագիտացման ուղղությամբ։ Այդ գործարանները ծանրաբեռնվում էին նախապատրաստական ու օժանդակ ցեխերի ամբողջ կոմպլեքսով, որի պատճառով էլ Հայաստանի մեքենաշինության մեջ դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացումը զարգացում համարյա չէր ստանում։ Մեքենաշինության զարգացման ցածր մակարդակի պատճառով Հայաստանում կառուցվող մեքենաշինական գործարանները ստեղծվեցին բոլոր հիմնական, մշակող և օժանդակ ցեխերի կազմով։ Պատրաստի արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ բոլոր ցեխերի ու տեղամասերի գոյությունը որոշ իմաստով պարտադիր էր կառուցվող մեքենաշինական գործարանների համար։ Բացի ստանդարտացված մի շարք դետալներից ու մասերից, որոնք ստացվում էին դրսից, պատրաստի արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ բոլոր տեխնոլոգիական ու արտադրական պրոցեսները կատարվում էին տվյալ գործարանում, այսինքն՝ գործարանները կառուցվում էին արտադրության փակ ցիկլի սկզբունքով։ Մասնագիտացված արտադրության բացակայության պայմաններում մեքենաշինական ձեռնարկությունները իրենց մոտ պետք է ձուլարան ունենային՝ ձուլված արտադրելու համար։ Պատրաստի արտադրանքի թողարկումն ապահովելու համար անհրաժեշտ էր, որ գործարաններն ունենային գործիքաշինական, ամրակապման նյութերի, վերանորոգման, առանձին դեպքերում պլաստմասսանե՝ և այլ ցեխեր կամ տեղամասեր։ Բազմացեխայնությունն ու ունիվերսալությունը հատուկ է Հայաստանի այն բոլոր մեքենաշինական գոր-

ծարաններին, որոնք կառուցվել են մինչև Ժողտնտխորհի ստեղծումը։ Մեքենաշինության արտադրության զարգացման հետ միասին պայմաններ են ստեղծվում պատրաստի մեքենաների արտադրության համար անհրաժեշտ առանձին դետալների ու հանգույցների արտադրության և տեխնոլոգիական պրոցեսների առանձնացման համար։ Պատրաստի մեքենայի որևէ մասի արտադրությունը առանձնացնելու և մասնագիտացված ձեռնարկություններում արտադրելու, կամ հեռավոր շրջաններից ստանալու փոխարեն այն տեղում կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ այդ դետալի կամ մասի պահանջը որոշակի մեծություն կազմի, որպեսզի նրա արտադրությունը հնարավոր լինի կազմակերպել ժամանակակից տեխնիկայի բազայի վրա։ Այսպես, օրինակ, Հայաստանի մեքենաշինության զարգացման սկզբնական շրջանում նպատակահարմար չէր առանձնացնել պլաստմասսաների, հիդրոհաղորդակների, հաստոցային նորմալների, ձուլվածքի, էլեկտրաապարատների և այլնի արտադրությունը, որովհետև նման դետալների ու մասերի պահանջը մեքենաշինության մեջ շատ փոքր էր։ Այդ պատճառով էլ նրանց արտադրությունը կենտրոնացվում էր առանձին փոքր, ոչ եկամտաբեր ցեխերում ու տեղամասերում, որտեղ հնարավոր չէր նոր տեխնիկան ու տեխնոլոգիան օգտագործել։ Ամեն ինչ տեղում արտադրելու սկզբունքով մեքենաշինական ձեռնարկությունների կառուցման պրակտիկան մասնագիտացման ցածր մակարդակի արդյունք էր։

Պետք է նշել, որ մեքենաշինական գործարանների նախագծման ու կառուցման նախկին սխալ պրակտիկան առանձին դեպքերում դեռևս շարունակվում է։ Յոթնամյակի առջևեկներից մեկում, Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների գործարանում ամրակապման նյութերի ցեխ է կազմակերպվել։ Մեր կարծիքով նպատակահարմար չէ Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների գործարանում ամրակապման ցեխ ունենալը։ Այդ նյութերի պահանջը պետք է լուծվի մասնագիտացված արտադրություն կազմակերպելու ընդհանուր հարցի հետ միասին։

ՍՄԿՊ XXI համագումարի կողմից ընդունված ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. պլանում ընդգծվում է, որ վճռականորեն պետք է հաղթահարվեն ձեռնարկությունների նախագծման ու տեղաբաշխման նախկին գերատեսչությունների կիրառած արատավոր պրակտիկան, երբ յուրաքանչյուր ձեռնարկություն նախագծվում էր առանձին՝ սեփական օժանդակ նորոգման ցեխերով ու արհեստանոցներով, հաշվի չառնելով ուրիշ ձեռնարկությունների հետ կոոպերացումը, որը հանգեցնում է ձեռնարկությունների շահագործման ծախսերի չարդարացված թանկացման։

Մեքենաշինության զարգացման ժամանակակից մակարդակը հնարավորություն է տալիս արմատապես փոխելու ձեռնարկությունների կառուցվածքը։ Ընդ որում, նոր կառուցվող գործարանների կառուցվածքի պարզեցումը զուգորդվում է արդեն գործող մեքենաշինական գործարանների կառուցվածքի պարզեցման հետ։

Հայաստանի մեքենաշինական ձեռնարկությունների գերակշռող մասի արտադրությունից ամրակապման նյութերի, չափող ու կտրող նորմալացված գործիքների արտադրության հանումը, ձուլվածքի, պլաստմասսաների, էլեկտրական ապարատների, մագնիտների և մեքենաշինության մեջ մասսայական կիրառման բաղմաթիվ դետալների ու մասերի արտադրության կենտրոնացումը

համապատասխան մասնագիտացված գործարաններում ու ցեխերում ավելորդ կդարձնի այդ ցեխերի ու տեղամասերի գոյության անհրաժեշտությունը մեքենաշինական գործարանների մեծ մասում և կպարզեցնի նրանց արտադրական կառուցվածքը։

Բազմագեխայնությունն ու ունիվերսալությունը, որը Հայաստանի մեքենաշինական ձեռնարկությունների կառուցվածքի թերությունն է, աստիճանաբար վերանում է դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացման հետագա զարգացման շնորհիվ։ ՀՍՍՌ մեքենաշինության հետագա զարգացման բազայի վրա, վերջին երեք տարիներին հիմք դրվեց դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացմանը, որի հետևանքով պայմաններ են ստեղծվում մեքենաշինության կոմպլեքսային զարգացման համար։

Այսպիսով, Հայաստանի մեքենաշինության զարգացումը ընթացավ միայն առարկայական մասնագիտացման ուղղությամբ, որովհետև.

1. Ընդհանրապես մեքենաշինության զարգացման մակարդակը դեռևս ցածր էր։

2. Կառուցվող մեքենաշինական գործարանները, որոնք պետք է արտադրեին որոշակի մեքենա, չէին կարող լրացվել մեքենաշինական գործարանների կոմպլեքսով։

3. Մեքենաշինության զարգացման համար անհրաժեշտ հարակից ճյուղերը և արտադրության մյուս ճյուղերը պատրաստ չէին մեքենաշինությանը սպասարկելու համար։

Մեքենաշինության հետագա զարգացումը ընթանում է մեքենաշինական ձեռնարկությունների կոմպլեքսի ստեղծման և դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացման զարգացման պայմաններում։ Դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացումը բացառիկ պայմաններ է ստեղծում նաև առարկայական մասնագիտացման զարգացման համար։

Արտադրության մասնագիտացման հիմնական խնդիրը միատեսակ արտադրանքի արտադրության կենտրոնացումն է, որի ժամանակ հնարավոր է կիրառել նոր տեխնիկան ու առաջավոր տեխնոլոգիան և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Հայտնի է, որ ժամանակակից մեքենաները, ընդհանրապես մեքենաշինության արտադրանքը, բարդ է, և նրա առանձին մասերի տեխնոլոգիան խիստ տարբեր է։ Հետևապես արտադրության մասշտաբների ու նոր տեխնիկայի ներդրման տեսակետից մի որոշակի մեքենայի արտադրության կենտրոնացումը որևէ գործարանում կարող է անբավարար լինել հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման պահանջներն ապահովելու առումով։ Ուստի, առարկայական մասնագիտացումը արտադրության մասնագիտացման առաջին էտապն է և սերտորեն կապված է մասնագիտացման մյուս տեսակների հետ։

Դետալային մասնագիտացման ժամանակ ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում միատեսակ արտադրանքի արտադրության կենտրոնացման, հետևաբար և հոսքային արտադրության, բարձր զարգացած տեխնիկայի ներդրման և էֆեկտիվ օգտագործման համար։

Դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացումը առարկայական մասնագիտացման ուղղակի շարունակությունն է։ Մասնագիտացման այս տեսակների զարգացման դեպքում արտադրանքի առանձին մասերի արտադրությունը վեր է ածվում ինքնուրույն հատուկ ճյուղերի։ Այս դեպքում արտադրության

միատեսակության աստիճանը ավելի է բարձրանում, քան առարկայական մասնագիտացման ժամանակ։ Դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացումը նպաստավոր պայմաններ են ստեղծում կոոպերացման զարգացման համար։

Ինչպես նշվեց վերևում, ՀՍՍՌ մեքենաշինության մեջ առարկայական մասնագիտացման զարգացումը չընթացավ դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացմանը զուգընթաց։ Մեքենաշինական գործարանները կառուցվում էին պատրաստի արտադրանքի արտադրության փակ ցիկլի սկզբունքով, որի հետևանքով արտադրությունը վարվում էր «Ինքնասպասարկման» ձևով։ Դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացման զարգացման վրա ոչ մի ուշադրություն չէր դարձվում։ Այդ է պատճառը, որ մեքենաշինական ձեռնարկությունների մեծ մասը դեռևս ծանրաբեռնված է պատրաստի արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ բոլոր պրոցեսներն ընդգրկող ցեխերով ու տեղամասերով։ Այդ ցեխերում ու տեղամասերում տարբեր են արտադրության տեխնոլոգիան, իսկ առանձին դեպքերում դրանք զբաղվում են մեքենաշինության արտադրությանը ոչ յուրահատուկ արտադրանքի թողարկմամբ։ Այդ պատճառով էլ ՀՍՍՌ մեքենաշինության արտադրության մեջ ժամանակակից աշխատանքներում զբաղված են բոլոր բանվորների 50—60 տոկոսը, իսկ այդ աշխատանքների կոմպլեքսային մեքենայացման հարցը դեռևս մնում է չլուծված։

ՍՄԿՊ Կենտկոմի Հունիսյան (1959 թ.) պլենումի որոշման մեջ ընդգծված է, որ «Միատեսակ և միատիպ մեխանիզմների հանգույցների ու դետալների և առանձնապես պահեստամասերի արտադրությունը դեռ փոշիացած է չմասնագիտացված շատ ձեռնարկություններում։ Ժողովրդական տնտեսությանը տնտեսական մեծ վնաս է հասցվում ձուլվածքի, կռանվածքի զոդված կոնստրուկցիաների, ամրացման նյութերի ու գործիքների մասնագիտացված ձեռնարկություններում արտադրության թույլ կենտրոնացման պատճառով»[3]։

Նշված թերությունները ամրողջովին տեղ են գտել նաև ՀՍՍՌ մեքենաշինական ձեռնարկություններում։ Մեքենաշինական ձեռնարկություններում արտադրության ունիվերսալությունը տեխնիկական առաջադիմության գլխավոր խոչընդոտն է։ Արտադրության ունիվերսալությունը վերացնելու համար անհրաժեշտ է զարգացնել դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացումը։

ՀՍՍՌ մեքենաշինական գործարաններից միայն Երևանի ավտոպահեստամասերի գործարանն է, որ մասնագիտացվել էր դետալների արտադրության գծով։

Մինչև Ժողտնտխորհի ստեղծումը դետալային մասնագիտացված գործարանների արտադրանքը մեքենաշինության արտադրանքի անշան մասն էր կազմում։ ՀՍՍՌ Ժողտնտխորհի ստեղծումից հետո առաջին քայլերն են արվել դետալային ու տեխնոլոգիական մասնագիտացման զարգացման ուղղությամբ։ Այժմ ՀՍՍՌ մեքենաշինության մասնագիտացման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ այն հիմնականում կենսագործվում է դետալային մասնագիտացված գործարանների ու ցեխերի կառուցման ուղիով։

ՀՍՍՌ Ժողտնտխորհը առաջին հերթին ձեռնամուխ եղավ մեքենաշինու-

[3] ՍՄԿՊ Կենտկոմի 1959 թվականի Հունիսյան պլենումի որոշումը, Հայպետհրատ, 1959, էջ 43—44։

թյանը սպասարկող դետալային մասնագիտացված գործարանների կառուցմանը, որոնք կոչված են մեքենաշինությանը սպասարկելու այն դետալներով ու կոմպլեկտավորող առարկաներով, որոնք նախկինում բերվում էին հեռավոր տնտեսական շրջաններից, կամ արտադրվում էին մեքենաշինական գործարաններում փոքր քանակությամբ, տնայնագործական ձևով։

1958 թվականից սկսած Հայկական ՍՍՌ-ում հիմք դրվեցին մի շարք գործարանների, որոնք մասնագիտացվելով մեքենաշինության համար անհրաժեշտ առանձին դետալների ու մասերի արտադրության գծով, կոչված են սպասարկելու մեքենաշինության արտադրությանը։ Երևանի «Հաստոցանորմալ», Էջմիածնի «Պլաստմասսաներիս», Երևանի «Հիդրոհաղորդակ» և «Էլեկտրաապարատներիս», «Գործիքաշինական», «Էլեկտրակիրամիկայի և «կիսահաղորդիչներիս», Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի և այլ գործարանների հիմնադրումն ու գործարկումը զգալիորեն բարելավել է դետալային մասնագիտացման վիճակը մեքենաշինության մեջ։